

Այս սովորական գործը կը շարունակուի մինչև կէսօր: Կէսօրին յոգնած վիճակով, ծառի մը շուքին տակ կը նստիմ եւ կաշիէ սուղորակս բանալով կը ճաշակեմ կնոջս պատրաստած համեղ ուտելիքները, որոնք այս վայրկեանին տւելի համով կը թւան ինձի, յոգնած ըլլալուս պատճառաւ: Յետոյ ծառին տակ կը պառկիմ հանգստանալու համար: Քիչ մը յետոյ կը շարունակեմ գործս:

Իրիկնամուտին՝ գեղիւու մը կը գովացնէ յոգնութենէն քրանած մարմինս. միամտմանակ կը հնչէ գելղին մատուռին զանգը, որու զօղանջով, գործիքներս մէկդի ձգելով եւ երկու եզներս կողքին՝ կ'ուղղուիմ գէպի տուն: Ջանտնք ախորժիքով կը վերջ, կը մանեմ ճաշասենեակ, ուր արդէն ընտանիքս սեղանին շուրջ ինձի կը սպասէ ընթրելու համար:

Յաջորդող երկու եղանակներուն՝ ձմբան եւ գարնան՝ կանուոր բան մը չունիմ մտանունչելու. միակ աշխատանքս այն է, թէ հոգ պիտի տանիմ արտերուս:

Եկու տմառը: Հունձքի ժամանակ է: Ընտանիքիս մեծ զաւակները հետս աւնելով կ'երթամ արա, ուր ցորենները սփեգոյն ալիքներու նման կը ծփան:

Օ՛ն. ուրեմն աշխատի՛նք. ձեռքերնիս մէկեկան մանգաղ, կը գլխատենք խեղճ ցորենները, որոնք ուրիշ օգնականներու միջոցաւ խուրձերու կը վերածուին եւ կ'առաջնորդուին գէպի կաւ: Հոն կը կանենք ցորենը, այսինքն՝ ցորենի հասիկները կը զտենք յարդէն: Ան այս գործն ալ վերջացաւ: Յորինով լիցուն պարկերը սայլերով կը փոխադրուին տուն: Հոն մէկ մասը կը պահենք տան տմբարին մէջ, մէկ մասը չուկոյ կը զրկեմ ծախելու համար իսկ մնացեալը ջաղացք կը զրկեմ, որպէսզի աղան: Հոն ցորենի հասիկները ալիւրի կը վերածուին եւ տուն կը բերուին: Այդ ալիւրը կինս փայտաչէն գաշտի մը մէջ կը շաղէ եւ յետոյ փուռին մէջ կ'եկիէ: Այս գործողութեամբ սեղի կ'ունենանոյ ցորենին վերջին փոփոխութիւնը, որով ալիւրը կը փոխուի համայն, որ այնքան անհրաժեշտ է մարդուն համար:

Անաւատիկ այս է հողագործի մը կեանքը:

ԵՐԱՆՈՒՇԻ ՂԱԶԱՐԵԱՆ

Նախապատրաստակամ Դասարան